ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

սեպտեմբերի 2026 թվականի №-Ա

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՉԻԿԻ 6/1 ՀԱՍՑԵԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Երևան քաղաքի Ֆուչիկի 6/1 հասցեի բազմաբնակարան շենքի (այսուհետ՝ Բազմաբնակարան շենք) բնակիչների կողմից լիազորված անձի (այսուհետ՝ Լիազորված անձ) կողմից 2025 թվականի հոկտեմբերի 9-ին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացված դիմումը, որով Լիազորված անձը խնդրել է Բազմաբնակարան շենքի բնակիչներին դարձնել Ընկերության բաժանորդ, և նշել, որ Բազմաբնակարան շենքը բնակեցված է ավելի քան 10 տարի, իսկ Բազմաբնակարան շենքի կառուցապատողներ «ՄՍ Շինարարներ» բաց բաժնետիրական ընկերությունը 2017 թվականին, և այնուհետև՝ «Արծաթ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 2025 թվականին ճանաչվել են սնանկ,

բ) Ընկերության 2025 թվականի հոկտեմբերի 28-ի №Ե-3904-25 գրությունը, որ Բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրամատակարարմամբ ապահովելու համար շենքերի կառուցապատողը Ընկերություն չի դիմել,

գ) Լիազորված անձի 2026 թվականի օգոստոսի 26-ի և Ընկերության 2026 թվականի օգոստոսի 28-ի Ե-3463-26 գրությունները, համաձայն որոնց՝ վերջիններս չեն առարկում Բազմաբնակարան շենքի սպառման համակարգը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով էլեկտրական ցանցին միացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №523Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 156-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման համար Կանոնների 180-րդ կետով սահմանված հայտը ներկայացնել, Ընկերությունից Կանոնների 27-րդ գլխով սահմանված կարգով Բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայման ստանալ և դրա հիման վրա Բազմաբնակարան շենքի սպառման համակարգի՝ բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ շինմոնտաժային աշխատանքների իրականացումն ապահովել կարող է Լիազորված անձը.
2. Լիազորված անձին՝ ընդունել ի գիտություն, որ էլեկտրատեղակայանքների կառուցման և տեղակայման աշխատանքները կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից՝ Ընկերության կողմից տրամադրված տեխնիկական պայմաններին և համաձայնեցված նախագծին, Կանոններին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տեխնիկական կանոններին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ.ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
սեպտեմբերի 2026թ.